ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

# Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի ՆՀ-1063 ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 85-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեն միաձուլման ձևով վերակազմակերպել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության:

Սահմանել, որ Հայաստանի փրկարար ծառայությունը և ջրային տնտրսության պետական կոմիտեն տարածքային կառավարման նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմիններ են:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2002 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքը սահմանելու մասին» ՆՀ-1063 հրամանագրում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

ա) ուժը կորցրած ճանաչել I բաժնի 19-րդ կետը.

բ) I բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ $15^1$-րդ կետով՝

«$15^1$. Տարածքային կառավարման նախարարություն».

գ) II բաժնում ուժը կորցրած ճանաչել 3-րդ, 6-րդ և 9-րդ կետերը:

***(1-ին կետը խմբ. 20.05.05 ՆՀ-91-Ն, փոփ. 01.12.05 ՆՀ-223-Ն)***

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ մեկամսյա ժամկետում ընդունել սույն հրամանագրից բխող համապատասխան որոշումներ:

3. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում 2005 թվականի մայիսի 1-ից:

**Հայաստանի Հանրապետության**
**Նախագահ** **Ռ. Քոչարյան**

2005 թ. ապրիլի 27
Երևան
ՆՀ-74-Ն